

Դուք, իմ պատկավոր եղբայր, եղևի եք այն բնարշավներից միմե, որոնք նույնիսկ մայրենի լիրի ու գրականության հալածանքի օրերում բարձր են պահել վրաց ժողովրդի հոգևոր կարողության գրեզակը:

Մեծ երջանկություն է Ձեզ համար, երբ էսօր Վրաստանն է համբուրում Ձեր բարձր վաստակավոր նակատն ու օրհնում իր արժանավոր սրբու աշխատանքը:

Վրաստանի ամեն մի ուրախ տոնը կենդանի արձագանք է տալիս եղբայրներից հայ ժողովրդի սրտերում և վրաց գրողի հազմանակի տոնը ուրախության օր է հայ գրողի համար:

Էս ղզացմունքով համակված՝ էսօր Ձեր գրական գործունեության հորելյանին, և որ-

պես հայ գրողների բնկերության նախագահ՝ թե բնկերության կողմից և թե իմ կողմից ցան-
ծաղին ողջունե եմ հղում և լիասիրտ մաղթում եմ, որ Դուք էլի երկար, ավելի բարձր թնդաց-
նեք վրաց ազնիվ սրտի խոսքը՝ Ձեր մայրենի ժողովրդի մեծության և բնդհանուր լուսավա-
րության ու եղբայրության համար:

Իր ցեղարվեստական երկերով Դ. Կլդիաշ-
վիլին հարստացրել ու դարգացրել է վրաց դա-
սական գրականության ռեալիստական ու գե-
մոկրատական արտգիյիաները, բարերար ազ-
դեցություն ունեցել մայրենի գրականության հետագա դարգացման վրա:

Կ. ՏԻԳՐԱՆՅԱՆ

ԴՈԿՏՈՐ ՉԱՐԼՁ ԴԱՌՄԵԹԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրոպայում հայագիտության զարգացմա-
նը իրենց նպաստն են բերում նաև անգլիացի
հայագետները, ինչպես՝ Ուինստոն եղբայրները,
Կոնիքերը, Բեյլեն և ուրիշներ: Դրանց մեջ իր
տասնամյա հայագիտական գործունեությամբ
աչքի է բնկնում նաև բանասիրական գիտու-
թյունների ղոկտոր, Լոնդոնի Արևելյան և աֆ-
րիկյան լեզուների ինստիտուտի հայագիտու-
թյան դասախոս Չարլզ Դաուսեթը:

Նա ծնվել է 1924 թ., 1943 թ. իբրև ուսա-
նող սովորում է Օքսֆորդի համալսարանում՝
հաճախելով Ֆրանսիական գրականության դաս-
ընթացները: 1947 թ. բնդունվում է Քեմբրիջի
համալսարանը, որտեղ հմտանում է համեմա-
տական լեզվաբանության ու արևելյան լեզու-
ների մեջ. իսկ 1949 թ. ստանում է ժամանա-
կակից և միջնադարյան ժողովուրդների լեզու-
ների իմացության վկայական՝ առաջին կարգի
պատվոգրով: Բանասիրության բնդհանուր տե-
սության և գիտական մեթոդաբանության յու-
րացման համար նա աշակերտել է ղոկտոր-
պրոֆեսոր Հ. Բեյլեին:

Իբրև հիմնական մասնագիտություն նախ-
ընտրելով հայագիտությունը, պրոֆ. Չարլզ
Դաուսեթը 1950—1954 թթ. շարունակում է իր
ուսումնառությունը այս անգամ Փարիզում՝
հաճախելով Արևելյան կենդանի լեզուների ազ-
դային ինստիտուտի և կաթոլիկական ինստի-
տուտի դասընթացները և ստանում երկու վկա-
յական՝ հայագիտության ու վրացագիտության
վերաբերյալ: Այստեղ նա աշակերտում է հայա-
գետներ Ֆրեդերիկ Ֆեյդին և Շառլ Մերսիե-
ին:

Բայց պրոֆ. Չարլզ Դաուսեթի համալս-
առավել հատկանշական տարին լինում է
1954 թ., երբ Քեմբրիջում հայագետին շնորհ-
վում է բանասիրական գիտությունների ղոկ-
տորի կոչում՝ միջնադարյան հայտնի հայ մա-
տենագիր Մովսես Կաղանկատվացու (Դասիու-
րանցու) «Պատմություն Աղուանից» երկի ու-
սումնասիրության և անգլերեն փայլուն թարգ-
մանության համար: Եվ նույն թվականին նա
նշանակվում է հայագիտության դասախոս՝ Լոն-
դոնի համալսարանի Արևելյան և աֆրիկյան
հետադոտությունների բաժանմունքում, որտեղ
և շարունակում է պաշտոնավարել: Ուշագրավ է
նաև, որ պրոֆ. Չարլզ Դաուսեթի ղեկավարու-
թյամբ Լոնդոնում հայագիտության բնագավա-
ռում հմտանում են մի շարք անգլիացի ուսա-
նողներ:

Պրոֆ. Դաուսեթի համար երկար տարիներ
ի ցանկություն է եղել լինել Մովսեսական Հա-
յաստանում:

Իվ ահա սույն թվականի Էսպոսեթեր և հոկ-
տեմբեր ամիսներին պրոֆ. Չարլզ Դաուսեթը
պաշտոնական հյուրն էր Մովսեսական Հայաս-
տանի հայագիտության կարևորագույն կենտ-
րոններից մեկի՝ Մաշտոցի անվան Մատենա-
դարանի: Այդ օրերին անգլիացի հայագետը
մեծ եռանդով աշխատում էր հայկական ձեռա-
գրերի վրա, նյութեր քաղում իր հետագա ու-
սումնասիրությունների համար, լուսանկարում
մեր մանրանկարչության լավագույն նմուշները,
մատենագիրների ղիմանկարները՝ հայագիտու-
թյունն ուսումնասիրող իր ուսանողներին ցու-
ցադրելու մտադրությամբ, իսկ ազատ ժամե-

բին էլ ուղեորություններ էր կատարում ղեպի Հայաստանի պատմական հուշարձանները սեփական աչքերով տեսնելու և լրացնելու իր այն դիտելիքները, որ տարիներ շարունակ փութաջանությամբ քաղել է հայադիտական գրքերից ու աշխատություններից: Նա միաժամանակ հանդիպումներ էր ունենում Սովետական Հայաստանի հայագետների՝ պատմաբանների, լեզվաբանների ու բանասերների հետ, տեղեկանում Հայաստանում ծավալվող հայադիտական աշխատանքներին և այլն:

Հոկտեմբերի 2-ին, Մաշտոցի անվան Ստեփանոսյանում, մեր գիտական հասարակայնության առաջ, պրոֆ. Դաուսեթր Դալերեն լեզվով հանդես եկավ հետաքրքրական մի գեկուցումով՝ «Մոզեսի հորենացու և Ամմիանոս Մարկելիանոսի առնչության մասին» թեմայով, ինչպես նաև ամփոփ հաղորդում տվեց Եվրոպայում ծավալվող հայադիտական աշխատանքների վերաբերյալ:

* * *

Պրոֆ. Դաուսեթր վերջին տարիներին հրատարակել է մի շարք հոդվածներ և աշխատություններ, որոնք վերաբերում են հայ մատենագրության հուշարձանների վերհանման ու լուսարանման հարցերին, դրանով իսկ իր կարևոր վաստակը բերելով հայադիտության զարգացմանը Եվրոպայում:

«Անտեսված մի էջ կովկասյան աղվանների պատմությունից» («A Neglected Passage in the History of the Caucasian Albanians») հոդվածը պրոֆ. Դաուսեթր 1957 թ. լայն է բնծայում Հոնդոնի համալսարանի «Արևելյան և արևմտյան հետազոտությունների ինստիտուտի ընդունելություն»: Սույն հոդվածում հեղինակը արևմտաեվրոպական գիտնականների ուշադրություն է հրավիրում Մոզես Կաղանկատվացու հանրահայտ աշխատությունից մի հատվածի վրա, որը գտնվում է Բրիտանական թանգարանում պահված հայկական ձեռագրերից մեկում: Այդ հատվածը բացակայում է պրոֆ. Պատկանյանի և Մ. Էմինի կատարած ուսերեն թարգմանություններում (1860), ուստի դրանով էլ պայմանավորված է նրա բնագրադիտական նշանակությունը: Այս հատվածում կան պատմական տրոշ գեպերի ու եղելությունների, ինչպես և անձնավորությունների վերաբերյալ տեղեկություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն այդ ժամանակի պատմագրության համար: Հեղինակը համապատասխան հատվածի անգլերեն թարգմանությունը տալուց հետո մեկնաբանում է այդ հատվածի պատմա-

դիտական նշանակությունը և տալիս մի շարք բառերի ստուգաբանությունը:

Նույն հանդեսում 1958 թ. պրոֆ. Դաուսեթր տպագրում է «Մխիթար Գոշի Աղվանից ժամանակագրությունը» («The Albanian Chronicle of Mxit'ar Gosh») աշխատությունը: Գոշի այս ժամանակագրությունը ներմուծված է



նրա «Դատաստանագրություն» ամփոփող մի ձեռագրում (Վենետիկ, № 1237) և Այդտեղ խոսվում է աղվանից այն կաթողիկոսների մասին, որոնք գործել են Մոզես Կաղանկատվացու «Պատմություն Աղուանից» աշխատության մեջ նշված կաթողիկոսներից անմիջապես հետո, մինչև ռուս զորքերի ուրան լուսարևի տար», — գրում է Գոշու Թեև հայ մատենագրության մեջ Գոշից մեզ հասած «Աղուանից ժամանակագրություն» խորագրով աշխատությունը չկա, բայց պրոֆ. Դաուսեթր, ելնելով աղվանից կաթողիկոսների ժամանակագրությունը Գոշի «Դատաստանագրություն» ներմուծված լինելու հանգամանքից, վերնագրում է այն իրեն այդպիսին: Ընդգծելով Գոշի այս հատվածի կարևորությունը, անդիադի հայագետը գրում է. «Աղվանից պատմության աղբյուրներից մեկը, որ մինչև այժմ իր բնագրային լեզվով անհայտության մեջ է մնացել Եվրոպայի գիտնականների համար չնայած սկզբնական ժամանակաշրջանն ուսումնասիրող հետազոտողների համար նրա ունեցած շահեկանությանը, Մխիթար Գոշի [այս] փորձիկ ժամանակագրությունն է» (էջ 472):

Կաղանկատվացու Աղվանից պատմությունը հիշատակելուց հետո, Գոշը բերում է աղվանից կաթողիկոսների ցուցակը՝ համապատ-

խան թվականների նշումով, որոնք, պրոֆ. Դաուսեթի կարծիքով, այլուր բացակայում են և հավանաբար վերցված են վաղուց կորած կաթոլիկոսական արձանագրություններից:

«Արևելագիտական հետազոտությունների հանդես» «Le Museon»-ի LXXIII հատորում բանասիրական դիմ. դոկտոր Դաուսեթը գրել է մի այլ ուշագրավ հոդված՝ «Մովսես Երզնկացու «Խրատ վասն խոստովանութեան» վերնագրով («Movses Erzingacis „Advice on Confession“): Մովսես Երզնկացին XIII դարի վերջի և XIV դարի սկզբի մատենագիր է, աշակերտել է Վերջույան արվեստի տեսաբան և բերական, նշանավոր գրիչ Գևորգ Սկևռացուն: Մովսես Երզնկացին դառնում է ոչ միայն հմուտ գրիչ, այլև ուսուցիչ գրիչների. նա հայտնի է նաև իր «Ողբ»-ով, որ գրել է իր մեծ ուսուցչի՝ Գևորգ Սկևռացու մահվան առթիվ:

Մովսես Երզնկացու «Խրատ» պրոֆ. Դաուսեթը դիտում է իբրև բաղկացուցիչ մասը այն խրատական գրականության, որ ստեղծվել է միջնադարյան Հայաստանում, և սերտորեն առնչվում է Դավիթ Ալավկա որդու հայտնի աշխատությանը՝ «Խրատը կանոնական»-ին: Բանասիրական քննությունից հետո պրոֆ. Դաուսեթը բերում է բնագիրը և այնուհետև՝ գրանդերեն թարգմանությունը:

1961 թ. «Հանդես ամսօրյա»-ի N 10—12-ում պրոֆ. Դաուսեթը գրել է մի այլ հետաքրքրական հոդված՝ «Կոստանդնուպոլսի պատրիարք Ստեփանոս Առաքինը և նրա մեղադրողները» վերնագրով («Step'anos I, Patriarch of Constantinople and His Accusers»): Այստեղ հեղինակը լինում է Բողլեյան մատենադարանում գտնվող մի ձեռագրի (N 35) տվյալներով: Ձեռագիրը մի սաղմոսարան է և այն բնօրինակել է Ստեփանոս Ուլուխալացին: Վերջինս Պոլսի 7-րդ հայ պատրիարքն է եղել և, նրա գործունեության հետ կապված են հայ իրականության մի շարք կարևոր զեպրեր: Հոդվածում բանասիրական դիտողություններով ու պատմաբանություններով ճշմարտ են Ստեփանոսի պատրիարքության տարիները, ինչպես և տրվում են բնագրում հանդիպող առանձին փոխառյալ բառերի ստուգաբանական բացատրությունները:

«Բրիտանական թանգարանի թանգարան» հանդեսում (հատ. XXIV, N 3—4) պրոֆ. Դաուսեթը գիտական նկարագրության է ենթարկում մանրանկարչության հարուստ մի հայտնի ձեռագիր, որը նոր է ավելացել հայկական ձեռագրական այն ֆոնդին, որի ամբողջական նկարագրությունը տվել է Կոնիսթանթնուպոլսի Պրոֆ. Դաուսեթի նկարագրած

ձեռագիրը մի ձեռքնոցի է, որը գրանցվել է Բրիտանական թանգարանում 1255-ի համարյա տակ:

Հայագիտական աշխատությունների մեջ ուշագրավության արժանի են հեղինակի հրատարակած հոդվածները «Բրիտանական հանրագիտարանում» («Encyclopaedia Britannica»), ինչպես՝ «Հայոց պատմություն», «Հայ գրականություն», «Աղագրականագիտություն», «Սուրբ Մեսրոպ», «Րաֆֆի», «Սայաթ-Նովա» թեմաներով, մի հոդված էլ լույս է տեսել «Չեմբերսի հանրագիտարանում» («Chambers Encyclopaedia») «Հայոց լեզու» վերնագրով:

Այնուհետև պրոֆ. Դաուսեթը իրար ևս ավելից հրատարակում է առավել ամբողջական և ծավալուն աշխատություններ: 1961 թ. նա առանձին գրքով լույս է բնծայում իր դոկտորական աշխատությունը՝ Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղուանից» («The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci») երկի անդլերեն թարգմանությունը՝ համապատասխան ծանոթագրություններով: 1861 թվականին պրոֆ. Բ. Պատկանյանի լույս բնծայած սույն աշխատության ռուսերեն թարգմանությունից հետո պրոֆ. Չարլզ Դաուսեթի ներկայացրած հրատարակությունը արևմտամետոպական լեզուներով արված առաջին ամբողջական և գիտական թարգմանությունն է՝ մատենագրական աղբյուրների ու ծանոթագրությունների հարուստ նշումներով: Անգլերեն թարգմանության հիմքում ընկած են Շահնազարյանի (Փարիզ, 1860) և Մ. Էմինի (Մոսկվա, 1860) հրատարակությունները, որոնք, իրենց հերթին, համեմատության մեջ են գրվել Բրիտանական թանգարանում, Ֆրանսիայի Ազգային մատենադարանում, Վենետիկի Մխիթարյանների և Լիբանանի Անթիլիասի մատենադարաններում գտնվող համապատասխան ձեռագրերի հետ: Բանասիրական այդ դժվարին աշխատանքը, բնական բնագրի բացակայության պայմաններում, հնարավորություն է բնական պրոֆ. Դաուսեթին տարրաբերությունների միջոցով բացահայտելու և ճշգրտելու աղավաղված առանձին բառերի ու նախադասությունների իմաստը: մի հանգամանք, որ առավել ևս բնագրում է անգլերեն թարգմանության համապատասխան ու գիտական նշանակությունը: Ներկայացնելով պատմական այս հուշարձանը, պրոֆ. Դաուսեթը նշում է, որ այն ոչ միայն առանձին նշանակություն և հետաքրքրություն ունի հայ մատենագրության, այլև՝ հատկապես բյուզանդագիտության, սասանյան և արաբական կայսրությունների և խաղաղների պատմությանը:

գրագիտական մասնագետների և ուսանողների համար:

Աշխատություններ ունի առաջարան, մասնագիտական ներածություն, բնագրի առավել հանդամանությունը բացահայտմանը նպաստող լայն ծանոթագրություններ, ինչպես և անձնանունների, տեղանունների ու առարկայական ցանկեր:

Նույն թվականին Հուլիսում (Քրյուսել) երկու հատորով լույս է տեսնում XI դարի վերջի և XII դարի սկզբի հայ ազանավոր իրավագետ և մատենագիր Գավիթ Ալավկա որդու «Խրատը կանոնական» աշխատության բնագիրն ու անդլերեն թարգմանությունը («The Penitential of David of Ganjak», Louvain, 1961, Volumes 3 and 4): Այդ աշխատությունը հայ մատենագրության մեջ ծանոթ է նաև իրեն «Հարցումն պետական խոստովանության բանից և պատահմանց եկեղեցի» կամ «Վան պետական հարցման խոստովանության խրատը գրուչացուցիչը»: Մատենագիտական տվյալների հիման վրա պրոֆ. Չարլզ Գաուսթր ցույց է տալիս, որ իրավաբանական այս հուշարձանը մինչև XVII դարը մոռացության է մատնվել: Իսկ XIX դարում առանձին բանասեր-քննադատներ բացասաբար են արտահայտվել իր բնույթով եզակի այդ երկր բովանդակության նշանակության մասին: Մական XX դարի սկզբից վերաբերմունքը փոխվում է այդ աշխատության դահատման հարցում և շատ բանասեր-քննադատներ բողոքում են պատմական, իրավաբանական և կենսաբանական մտքի զարգացման մեջ դրա կարևորությունն ու նշանակությունը հայ մատենագրության անդադարախալում: Այդ աշխատությունը, բայց հայ իրավաբանական մտքի պատմության ամենահեղինակավոր մասնագետի՝ Խ. Սամուելյանի, հայկական «կանոնական ռեգլամենտի» հիման վրա կազմված երկ է, որը մեծ մասամբ բովանդակում է կանոնական նորմերի և օրենքների հրահանգներ ու բացատրություններ: Հայաստանում դա որոշակի ճանաչում ու պաշտոնական գործածություն է գտել, և անգամ նրա հոգովածներից շատերը Մխիթար Բոչր բառ առ բառ ներմուծել է իր Գաղատաանագրություն:

Բնագրի հրատարակության համար հիմք է ծառայել պրոֆ. Ա. Գ. Արրահամյանի՝ «Երիտթիս» ամսագրում լույս բնծայած տերտոր (1952, համարներ՝ Թ—ԺԲ, 1953, համարներ՝ Ա—Գ): Պրոֆ. Չարլզ Գաուսթր, սակայն, չի բավարարվում միայն գրանով. բնդունելով հանդերձ, որ չափազանց բարդ և գրեթե անհնարին է բնական բնագրի պատրաստումը (նկատի ունենալով հետագա գրիչների կողմից արված բազմաթիվ ներմուծություններն ու բացթողում

ները), նա, աշխուժեցնելով, կարծում է, որ արտատահմանի տարրեր մատենագրաններում գտնված համապատասխան ձևագրերի հետ համեմատությունը, անսարակությամբ, կօգնի բացահայտելու և ազդարարելու առանձին ազավագված բառերի ու նախադասությունների իմաստը և բերականական ստույգ ձևերը: Երկուսով այդ անհրաժեշտությունից, պրոֆ. Չարլզ Գաուսթր իր հերթին համեմատության մեջ է դնում պրոֆ. Ա. Գ. Արրահամյանի կազմած բնագիրը Վենետիկի, Երուսաղեմի, Զրմմարի (Լիբանան) մատենագրաններում և Քեյլի անձնական գրագրանում եղած չորս 7 ձևագրերի հետ: Ուշագրավ է գիտել, որ բնագրի կազմման և հրատարակման գործում գրանորվում են անգլիացի հայագետի բանասիրական հմտությունն ու բնագրագիտական կարողությունը:

Կարևոր է նկատել նաև, որ պրոֆ. Չարլզ Գաուսթր իրավաբանական այս հուշարձանը գիտում է առանձին գուգահեռների մեջ սեմական և իրանական նույնատիպ աշխատությունների հետ, ցույց տալով մի կողմից դրանց բնահանություններն ու առնչակցությունները, մյուս կողմից՝ տարրերություններն ու յուրարանչյուրի ինքնատիպությունը: «Միջնակր» (երրայական դատաստանագիրը—Լ. Խ.) և «Խուտալ»-ը (Գավիթ Ալավկա որդու աշխատությունը—Լ. Խ.) գերագանցապես բխում են մի աղբյուրից՝ Հին Կառնարանից,— գրում է նա,— մինչդեռ գրադաշտական օրենսգրքերի հետ «Խուտալ»-ի նմանությունները հուշում են Հայաստանի մշակութային հին կապերը իրանական աշխարհի հետ» (Գավիթ Ալավկա որդու աշխատության անգլերեն թարգմանությունը, էջ XVI):

Բնագիրը պարունակող հատորը ունի ներածություն, որտեղ քննվում են տերտոր պատասխան հետ կապված հանդամանքները, համեմատագրությունների, ներածության ու ծանոթագրությունների մեջ գործածված հատուկ առնունների ու տեղանունների և առարկայական ցանկեր: Իսկ թարգմանությունը բովանդակող հատորը բաղկացած է նաև մասնագիտական ներածությունից, Աստվածաշնչից բերված բազմաթիվ, հատուկ անունների և առարկայական նշանների ցանկերից:

Բացի նշված աշխատություններից, պրոֆ. Չարլզ Գաուսթր այժմ ձեռնամուխ է եղել Տիմոթեոս Կուգի «Հակաճառություն» գիտական թարգմանության անգլերեն լեզվով: Նա հանձն է առել մասնակցելու նաև աշխարհում մեկ սփռված և տարրեր մատենագրաններում ու առհասարակ գրագրաններում գտնվող հայ ձևագրերի մանրալուսանկարման գործին:

Լ. ԽԱՉԻՐՅԱՆ